

ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Սակայն պէտք է ընտրել այնպիսի ընկեր, որ ուրախութեան մէջ ուրախակից ըլլայ եւ տրտմութեան մէջ կարեկից ու մխիթար: Եւ որքան քաղցր ու ցանկալի է բարի ընկերը, այնքան դառն ու տաղտկալի է չար ընկերը: Առաջինը դժուարին դիպուածներու ժամանակ գիտէ ցաւերու ծանրութիւնը վերցնել ու տառապանքը թեթեւցնել, իսկ երկրորդը՝ անակնկալ վտանգներ կը պատճառէ ու վշտի վրայ վիշտ կ'աւելցնէ:

Շատ չար մարդիկ կան, որոնք եթէ չար ընկերոջ չպատահէին, չար չէին ըլլար. եւ կան շատ բարի մարդիկ, որոնք եթէ բարի ընկերոջ չհանդիպէին բարի չէին ըլլար: Ուրեմն՝ չար կամ բարի ըլլալու պատճառը յաճախ ընկերութիւնն է: Երիտասարդները թող զգուշանան չարերու հետ ընկերակցելէ, եթէ չեն ուզեր չար ու վատահամբաւ ըլլալ, որովհետեւ երիտասարդական տարիքը, դէպի մոլորութիւնները դիւրասահ ըլլալով, չար ընկերոջ օրինակով արագօրէն չարիք կը սորվին: Յիմար է ան, որ անխտիր ամէնուն հետ կ'ընկերանայ:

Զարմանալի ոչինչ կայ, որ բազում բարեբարոյ մարդիկ հազիւ մէկ անգամ կրնան ուղղել, իսկ մէկ չարը բաւական է շատեր մոլորեցնելու համար: Քանզի շատ առողջներ ալ մէկ բորոտը մաքրել չեն կրնար, բայց մէկ բորոտ կարող է ախտահարել բոլորը:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼԻ

ԿՐՕՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

ՈԳԻՆԵՐԸ, ԳԵԻԵՐԸ, ՉԱՐ ՈՒԺԵՐԸ՝ ՀՈԳԵՒՈՐ ԳԻՏԱՆԿԻՒՆԷՆ

ԽԱՂԱԹՈՒՂԹՈՎ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆՈՐ ՀԵՏԵԱՆՔՆԵՐԸ

Վկայութիւն անձի մը կողմէ, որ կը պատմէ հետեւեալը. «Հայրս կախարդութեամբ կը զբաղէր: Ուսումնասիրած էր "Մովսէսի 6-րդ եւ 7-րդ գիրքերը": Հմայական զանազան բանաձեւեր գիտէր: Մայրս նոյնպէս Սատանային շղթաներուն մէջ բռնուած էր եւ տանջանքներով մահացաւ: Ատկէ ետք ես վհատեցայ: Նոյնիսկ արեւուն լոյսով եւ Աստուծոյ ստեղծած բնութեան գեղեցկութեամբ չէի հրճուեր: Միակ փափաքս էր՝ մեռնիլ: Սակայն Աստուծոյ գթասրտութիւնը կը պահպանէր զիս. հակառակ պարագային շատոնց մեռած պիտի ըլլայի: Այն օրերուն յաճախ կը դիմէի խաղաթուղթով գուշակութիւն ընողներուն. քովս "երկնային գրութիւններ" կը պահէի: Հետզհետէ այդ մեղքին խորերը կը մտնէի: Քանի մը տարի առաջ որոշեցի Աստուծոյ ծառայել: Ուզեցի ճահճուտէն լոյս աշխարհ ելլել: Եւ հիմա, Քրիստոսի ժառանգորդը ըլլալով հանդերձ, տակաւին ամբողջական հանգիստ եւ ուրախութիւն չունիմ: Մահուան մասին մտածած ատեն մտահոգութիւն մը կը տանջէ զիս. համոզուած չեմ որ պիտի փրկուիմ: Յաճախ ինքզինքս հալածուած եւ հիւժած կը զգամ: Եկեղեցի երթալը, Աստուածաշունչ կարդալը, աղօթք ընելը պարտադիր դարձեր են, բայց ներքին անյաղթահարելի պահանջ չեն... *Շարունակելի*

ՉԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱՐՈՒՆԱԿԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 - Tel/Fax: 01-258300 - E-mail: jerak@live.com



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԵԴ ԽՄ ՈՏԲԵՌՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ՇԱԽԴԱՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս., 119.105)

Ե. ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ՝ 5 ՕԳՈՍՏՈՍ, 2012

ԹԻՒ 32

ՅԻՍՈՒՄ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՐԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ԱՄՐԿՈՍԻ 2.1-12

Քանի մը օրեր ետք Յիսուս վերադարձաւ Կափառնայում: Անմիջապէս որ լուր տարածուեցաւ թէ տունին մէջ կը գտնուի, շատեր հաւաքուեցան հոն, այնքան որ դրան առջեւ իսկ տեղ չէր մնացեր: Յիսուս Աստուծոյ խօսքը կը փարփէր անոնց:

Այդ միջոցին Յիսուսի բերին անդամալոյծ մը, որ չորս հոգիներ շալկած էին: Երբ ամբողջին պատնասով չկրցան զայն Յիսուսի մօտ բերել, ֆակեցին տունին տանիքը եւ առաստաղը բանալով՝ անդամալոյծը մահիկով վար իջեցուցին: Յիսուս անոնց հաւատքը տեսնելով ըսաւ անդամալոյծին. «Որդեակ, մեղքերդ ներուած ըլլան քեզի»:

Օրէնքի ուսուցիչներէն ոմանք, որոնք հոն գտած էին սկսան մտովի ֆննդատել զայն. «Ինչպէ՞ս կը համարակի ասանկ բան ըսել. ըրածը հայտնութիւն է: Աստուծմէ գատ ո՞վ կրնայ մեղքերը ներել»:

Յիսուս վայրկեանին գիտցաւ անոնց մտածումը եւ ըսաւ. «Ինչո՞ւ այդպէս կը մտածէք: Ո՞ր մէկը աւելի դիւրին է. անդամալոյծին «մեղքերդ ներուած են քեզի» ըսելը, թէ «Ե՛լ, մահիկդ ա՛ն եւ տունդ գնա» ըսելը: Բայց որպէսզի գիտնա՞ք թէ մարդու Որդին երկրի վրայ իշխանութիւն ունի մեղքերը ներելու, ահա նաեւ կը բժշկեմ զայն»:

Ու դառնալով անդամալոյծին ըսաւ. «Քեզի կ'ըսեմ. Ե՛լ, ա՛ն մահիկդ եւ տունդ գնա»: Անդամալոյծը անմիջապէս բոլորին առջեւ ոտքի ելաւ, վերցուց իր մահիկը եւ դուրս ելաւ: Բոլորն ալ զարմացած. կը փառաւորէին զԱստուծոյ եւ կ'ըսէին. «Այսպիսի բան բնաւ տեսած չէինք»:

ՔՐԻՍՏՈՍ ԲԺԻՇԿՆ Է ԲՈՂՈՐԻՆ

Իրական հիւանդութիւնը հոգիի հիւանդութիւնն է եւ ո՛չ թէ մարմնի հիւանդութիւնը: Քրիստոս ամէն անգամ երբ մէկը պիտի բժշկէր, նախ կ'ուզէր անոր մէջ հաւատք տեսնել կամ արծարծել: Սա ցոյց կու տայ թէ ան կը նախադասէ հոգիի բժշկութիւնը բայց բնաւ չ'անտեսեր մարմնի բժշկութիւնը: Քրիստոս ինքն է իրական բժիշկը, որովհետեւ աշխարհին մէջ գոյութիւն ունեցող միլիոնաւոր բժիշկներէն միայն ինք կրնայ կենդանացնել մեր հոգիներն ու սիրտերը: Ան բժիշկն է բոլոր մարդոց: Եղիշէ կ'ըսէ. «Տէրը ոչ թէ աշխարհի միայն մէկ մասին համար եկաւ, այլ՝ աշխարհի բոլոր մասերուն համար: Մէկ մասը բժշկեց, որպէսզի մէկ մասի միջոցաւ, բոլոր մասերը սորվին նոյն բժշկին մօտ երթալ»:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԵՓԵՍՈՍԻ Ս. ԺՈՂՈՎՈՅՆ 200 Ս. ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ

Եփեսոսի Տիեզերական ժողովը իր տօնակատարութիւնը ունի Հայց-եկեղեցւոյ մէջ՝ Վերափոխման տօնի Բարեկենդանի Շաբաթ օրը:

Եփեսոսի տիեզերական ժողովը գումարուեցաւ 431 թուականին, մասնակցութեամբ՝ 200 հայրապետներու, քննելու համար Նեստորի աղանդաւորական մոլոր վարդապետութիւնը:

Նեստոր կ'ըսէր, որ Յիսուս մարդ ծնաւ մեզի նման, ապա աստուածային բնութիւն ստացաւ: Նեստոր կ'ուսուցանէր նաեւ, որ Ս. Կոյս Մարիամ Աստուածածին չէ, այլ՝ մարդածին: Նեստորի այս մոլոր վարդապետութիւնը մեծ խռովութիւն յառաջացուց:

Նեստորի դատապարտելի ընթացքը քննելու համար, Փոքր Թէոզորոս կայսեր հրամանով, Եփեսոս քաղաքին մէջ, 200 հայրապետներու մասնակցութեամբ, տեղի ունեցաւ տիեզերական ժողով: Ժողովի ընթացքին դատապարտուեցան Նեստորն ու իր համախոհները եւ հաստատուեցաւ Կիւրեղ Աղեքսանդրացիի բանաձեւը՝ Քրիստոսի բունութեան վերաբերեալ «Մի բնութիւն Բանին մարմնացելոյ» նախադասութեան մէջ խտացելով: Ըստ այս բանաձեւին՝ Յիսուս ծնաւ որպէս Աստուած եւ իր աստուածային ու մարդկային բնութիւնները անշփոթ կերպով իրար միացան եւ կազմեցին մէկ քնուրթիւն: Իսկ Ս. Կոյսը դաւանեցին Աստուածածին:

Հայ եկեղեցին եւս ընդունեց Եփեսոսի ժողովի կանոններն ու որոշումները եւ եկեղեցական օրացոյցին մէջ յատուկ օր ալ նշանակեց տօնելու եւ յաւերժացնելու համար այդ ժողովի յիշատակը:

Այստեղ անհրաժեշտ կը համարենք յիշատակել, որ Հայ եկեղեցին կ'ընդունի միայն երեք տիեզերական ժողովներ՝ Նիկիոյ, Եփեսոսի եւ Կ. Պոլսոյ, եւ կը դաւանէ միայն անոնց որոշումներն ու բանաձեւումները:

Ի՞նչ ՀԱՆԴԻՍԱԻՈՐՈՒԹԵԱՄԲ ԿԸ ԿԱՐԴԱՅՈՒԻ ԱԻՆՏԱՐԱՆԸ

Աւետարանի ընթերցումը միւս բոլոր ընթերցումներէն շատ աւելի մեծ բացառութիւն ունի: Զայն կը կարդան առանձին հանդիսաւորութեամբ: Սարկաւազը կը ձայնէ Օրթի (Ոտքի)՝ քահանան՝ Խաղաղութիւն ամենեցուն (Խաղաղութիւն ամենունդ)՝ դպիրները՝ եւ ընդ հոգւոյդ քում (Նաեւ՝ քո՛ւ հոգիիդ)՝ սարկաւազը՝ երկիւղածութեամբ լուարուք (Երկիւղածութեամբ մտիկ ըրէ՛ք): Աւետարանը կարդացողը՝ Սրբոյ Աւետարանի Յիսուսի Քրիստոսի որբստ Մատթէոսի (Յիսուս Քրիստոսի Աւետարանը՝ Մատթէոսի համաձայն)՝ դպիրները՝ Փառք քեզ Տէր Աստուած մեր (Փա՛ռք քեզի, Տէր Աստուած մեր)՝ սարկաւազը՝ Պոռոխումէ (Մտիկ ընենք)՝ ժողովուրդը՝ ասէ Աստուած (Աստուած է որ կը խօսի):

Ճաշակեցէք եւ տեսէք՝ թէ ինչքան քաղցր է Տէրը՝ երանի՛ անոր՝ որ Տիրոջ կ'ապաւինի: Հօրազոյն մարդիկն իսկ կարօտութեան եւ անօթութեան կրնան մատնուիլ, սակայն Տիրոջ դիմողները բանի մը կարօտ պիտի չմնան: (Սաղմոս 34:8, 10)

ՃԱՆՉՆԱՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՄ ԽՐԱՏՆԵՐԸ

ԳՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Արդ, բոլոր գողութիւններն ալ չար են եւ հակառակ՝ Քրիստոսի, որ սորվեցուց քրիստոնեաներուն. «Եթէ մէկը հազուստդ առնէ, միւսը եւս տուր»: (Ղուկ. 3:11): Ուստի, ի՞նչ պատասխան պիտի տան դատաստանի օրը անոնք որոնք ուրիշներունը կը գողնան:

Գիտցէ՛ք, որ երբ գողը, զրկողն ու յափշտակողը ամէն մէկ արծաթ դրամի փոխարէն ոչխար միակ եթէ մատաղ ընէ, անօգուտ է. միայն այն ատեն թողութիւն կը գտնէ երբ գողցուածը տիրոջ վերադարձնէ եւ ինք դառնայ մեղքերէն ու ապաշխարէ: Այլապէս կը զրկուի արքայութենէն, դժոխք կը մտնէ, եւ եթէ նախապէս բարիք մը իսկ գործած էր, դատաստանի օրը այդ ալ կ'առնուի իրմէ եւ կը տրուի իրաւատիրոջ, իսկ ինք սատանային հետ անողորմաբար կը տանջուի: Գողութիւն կը համարուի նաեւ այն, որ երբ մէկը բան մը կը գտնէ, չի վերադարձնել տիրոջ երբ ան յայտնուի. ուստի նոյն պատիժը կը կրէ:

(ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՑԻ)

Երբեմն բոլորս ալ անիմաստ պատճառներով երդում կ'ընենք՝ առանց անդրազանալու թէ երդումը մեղք է: Ճրագի յառաջիկայ թիւին մէջ պիտի փոխանցենք Երզնկացի վարդապետին խրատը երդումը ընողներուն: Հետեւեցէ՛ք մեզի:

ԱՌԱՎՆԵՐ՝ ԳԼՈՒԽ ԻԲ (22)

Լաւ անունը, նախընտրելի է մեծ հարստութենէն եւ բարի համբաւը՝ ոսկիէն ու արծաթէն:

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

Ո՞Ր ԿՈՂՍ ՆԱՅԻԼ

Դու՛ն գիտես իմ նստիլս ու ելլելս: Իմ խորհուրդս հեռուէն կ'իմանաս (Սաղմոս 139:2):

Արդեօք ի՞նչու մարդիկ կը խորհին, թէ կրնան ընել շատ մը բաներ, որ ուրիշներ չեն կրնար: Միթէ անոնք կը մոռնա՞ն թէ կայ Մէկը, որ կը լսէ ու կը տեսնէ ամէն բան: Եթէ մարդիկ չեն ուզեր որ ուրիշներ գիտնան իրենց ըրած կարգ մը բաները, ի՞նչպէս կրնան անտեսել այն իրողութիւնը թէ Աստուած կը տեսնէ ու կը լսէ ամէն բան:

Սաղմոս 130. 1-4-ին մէջ Դաւիթ այսպէս կը գրէ. «Ո՛վ Տէր, զիս քննեցիր ու քննեցար: Դու՛ն գիտես իմ նստիլս ու ելլելս, իմ խորհուրդս հեռուէն կ'իմանաս: Իմ շաւիղս ու պակիլս կը քննես եւ իմ բոլոր քամբանքս գիտես: Վասն զի բնաւ խօսք չկայ իմ լեզուիս վրայ: Ահա դու՛ն ո՛վ Տէր ամէնը գիտես:

Հայր մը իր գաւկիմ ընկերակցութեամբ կը քամբորդէր, երբ քամբայէն բաւական ներս արտի մը մէջ տեսաւ ձկնորսներու կոյտ մը: Հայրը ըսաւ տղուն. «Նայէ չորս կողմ միջնա երթամ ձկնորս կը բերեմ»: Ան գնաց, ընտրեց ձկնորս մը, եւ ինքնաշարժ վերադառնալէ առաջ հարցուց տղուն. «Ո՛նք մէկը կը գտնուի՞ մօտերը: Դիտէ չորս կողմդ»: Տղան այսպէս պատասխանեց հօրը. «Հայրիկ, չե՞ս խորհիր թէ պէտք է վեր նայիմք»:

Այո՛, շատ կարեւոր է վեր նայիլ: Արդեօք ի՞նչ վարուելակերպ ունիս դու՛ն երբ ոնք մէկը չի տեսնիր քեզ: Մի՛ մոռնար որ Աստուած կը տեսնէ: Քննէ՛ քու անձը:

ԵՍԱՑԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԵՆ

7.1-9

Հրեաստանի Ա.ֆազ թագաւորին օրով, որ Յովաթամի որդին էր եւ Ոգիայի թոռը, Ասորիի Ռասին թագաւորը եւ Իսրայէլի Փակէէ թագաւորը, որ Ռումելի որդին էր, Նրուսաղէմի դէմ պատեարազմելու պատրաստուեցաւ. բայց չկրցաւ յարձակման անցնիլ: Երբ Ա.ֆազ եւ ամբողջ Հրեաստան լուր առին թէ Ասորիի Նիբեմի հետ դաշնակցած է, թագաւոր եւ ժողովուրդ իրենց սարսափէն սկսան դողալ, այնպէս ինչպէս անտառին ծառերը կը դողան հովին դիմաց:

Այն ատեն Տէրը Նայիին ըսաւ. *«Յ՛լ, հետդ առ էու տղադ որ ՇէարՆաշուր կը կոչուի, եւ գնա Ա.ֆազի տոյ: Իրեն պիտի հանդիպիս թափիչին արտը տանող մամբուն վրայ, ջրանցքի վերին աւազանին տոյ: Այսպէս ըսէ իրեն.՝ «Չգո՛յշ եւ հանդարտ եղիւր, տակնուվրայ մի՛ ըլլար ու մի՛ վախնար Ասորիի եւ Իսրայէլի թագաւորներէն որոնք ծխացող երկու խանձող փայտերու պէս երբ գան իրենց գայրոյթը էու վրադ թափելու՝ եւ էեզ հարուածէն պիտի փրկես: Ասորիի եւ Իսրայէլի թագաւորները էեզի համար չար ծրագիր մը յղացան եւ ըսին. «Նոյնմէ Հրեաստան երթանք, մեր կողմը սիրաշահինք հրեաստանցիները կամ բռնադատենք զանոնք եւ անոնց վրայ թագաւոր կարգենք Տարելի որդին»»:*

Բայց այսպէս կ'ըսէ Նրկնաւոր Զօրեբու Տէրը.՝ *«Այս ծրագիրը պիտի չիրականանայ բնաւ: Որովհետեւ ինչպէս Ասորիի մայրաքաղաքը Դամասկոսն է եւ Դամասկոսը կառավարողը Ռասինի տունը, այնպէս ալ Իսրայէլի մայրաքաղաքը Սամարիան է եւ Սամարիան կառավարողը՝ Ռումելի որդիին տունը. բայց ահա վաթսուներեք տարիէն Իսրայէլ պիտի կորսնցնէ իր թագաւորութիւնը: Դու՛ք ալ, նմանապէս, եթէ Տիրոջ չվստահիք՝ դու՛ք ալ պիտի չկարենաք գոյատեւիլ»:*

Շարունակել Աստուածաշունչէն

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԱՌԱՋԻՆ

ՆԱՄԱԿԸ

ԿՈՐԻՆՏԱՑԻՆԵՐՈՒՆ

13.11-14.5

Երբ երեխայ էի՝ երեխայի պէս կը խօսէի, երեխայի պէս կը խորհէի եւ երեխայի պէս կը տրամաբանէի. իսկ երբ տղամարդ դարձայ, բոլոր երեխայական բաները մէկ կողմ դրի: Նոյնպէս ալ մենք այժմ զԱստուած կը տեսնենք աղօտ կերպով, կարծես հայելիի մը մէջէն. բայց երբ ամէն բանի կատարումը գայ՝ գայն պիտի տեսնենք դէմ առ դէմ: Այժմ միայն մասնակիօրէն կը փանջնամ զԱստուած, բայց այն ատեն պիտի փանջնամ ամբողջապէս, միշտ ինչպէս ի՛նք գիս կը փանջնայ:

Արդ, ուրեմն, միակ մնայուն բաներն են՝ հաւատքը, յոյսը եւ սէրը. իսկ այս երեքէն մեծագոյնը սէրն է:

Ուստի սիրոյ հետամուտ եղէք առաւելաբար: Միաժամանակ հոգեւոր պարգեւներուն փափաքող եղէք, մանաւանդ պատգամախօսութեան, այսինքն՝ մարգարէութիւն ընելու: Որովհետեւ, օրինակ, անծանօթ լեզուներով խօսողը մարդոց չէ՛ որ կը խօսի, այլ Աստուծոյ. որովհետեւ ոչ ոք զինք կը հասկընայ, թէ եւ անիկա Հոգիին զօրութեամբ խորհուրդներ կը պատմէ: Մինչդեռ պատգամախօսութիւն ընողը մարդոց կը խօսի՝ անոնց հաւատքը ամրապնդելու, զանոնք միջիթարելու եւ փառաբանելու համար: Լեզուներ խօսողը միայն ի՛նք կ'օգտուի, մինչդեռ պատգամախօսութիւն ընողը ամբողջ եկեղեցւոյ շինութիւն կը բերէ:

ՇԱՐՈՒՄԱԿԵԼ

**ԸՆԹԵՐՑՄՆՈՒԹԻՒՆԸ
ՍՍՏՈՒՄԾԱՇՈՒՄԸՆ:**